ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԾՁԲ-2/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

18.09.2019թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱՎ պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ)
ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության պլանավորման բաժնի պետ, գնդապետ Ա. Վարդանյան,
ՀՀ ՋՈՒ ՄՊ վարչության ՆՏԱ բաժնի շահագործման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Վ. Ղևոնդյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության ապառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Հակոբյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով բաց ընթացակարգի հանձնաժողովինիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Հակոբյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել մեկ մասնակից.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«ՆԻԻՊ ԱԼՖԱ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

(Գ. Հակոբյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը www.armeps.am կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակցի հայտով ներկայացրած բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Հակոբյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 1 մասնակից.

3.2 Մասնակցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 7.6 կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց, գների նվազեցման նպատակով 23.09.2019թ. ժամը 15:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Սահմանված օրը «ՆԻԻՊ ԱԼՖԱ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացրել բանակցություններին և գնային առաջարկը մնացել է անփոփոխ: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի ներկայացրած հայտը համարվեց հեռագա գնահատման համար ընդունելի:

Հ/Հ	Ծառայության անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գինը	«ՆԻԻՊ ԱԼՖԱ» ՓԲԸ -ի գնային առաջարկ		1-ին տեղ զբաղեցնող մասնակից
					առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով	
1	Շարժական թիրախային բնագծերի կահավորում (Շարժական թիրախային բնագծի կահավորում (270մ))	լրակազմ	1	10 800 000	10 800 000	10 800 000	«ՆԻԻՊ ԱԼՖԱ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Հակոբյան)

4.1 23.09.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա 1-ին չափաբաժնում 1-ն տեղ զբաղեցնող ճանաչվեց «ՆԻԻՊ ԱԼՖԱ» ՓԲԸ -ն: **Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ ենթակետի (ոչ մի հայտ չի ներկայացվել) համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարվեց չկայացած:**

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ. Հակոբյան)

5.1 Մասնակցի կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ. Հակոբյան)

6.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-2/1» ծածկագրով Գնանշման հարցման նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ սույն ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող, Ա. Վարդանյան

Գնահատող, Վ. Ղևոնդյան

Գնահատող, Տ. Գասպարյան

Գնումների համակարգող՝ Գ. Հակոբյան